ները փչացրել են ձեզ: Եթէ դուք լինէիք փոքր-ինչ զարգացած մարդ, ես ձեզ կապացուցանէի, որ դուք այդ գրքից ոչինչ չէք հասկացել: Բայց տգէտների հետ խօսելը շատ դժուարին է: Ցաւալին այն է, որ ձեր նմանները քարոզիչներ եւ վարժապետներ են...

Նա վեր կացաւ եւ գնաց Ասլանի մօտ:

— Այդ մարդը խելագար է, — ասաց միսիոնարների առաջին աշակերտը նրա գնալուց յետոյ:

— Լո՛ւռ, անպիտան, — գոչեցի ես, — եթէ ոչ, ողջ տեղդ այդ յիմար գլուխդ կը թողնեմ:

Նա լռեց, միւսները նոյնպէս ոչինչ չխօսեցին:

Ես սկսեցի մի առանձին զզոանք զգալ դէպի այդ մարդիկ, որոնք աւելի խղճալու կարօտ էին, քան թէ կարելի էր նրանց վրայ բարկանալ: Ողորմելի մարդիկ, մի գերութիւնից ընկել էին միւս գերութեան մէջ, թուրքի, քուրդի ստրկութիւնից դարձել էին միսիոնարի ստրուկ...

Ես գնացի Ասլանի մօտ, բայց Ջալլադին այնտեղ չգտայ: Նա գնացել էր, երեւի, թափառելու գիշերային մթութեան մէջ, իր բորբոքած սիրտը զովացնելու համար: Ասլանը քնած չէր: Ես պատմեցի նրան Ջալլադի վիճաբանութիւնը բողոքականների հետ: Նա խիստ սառնութեամբ պատասխանեց.

— Իզուր է այդպէս դատապարտել նրանց. այդ ողորմելիները ինչո՞վ են մեղաւոր, նրանք արդիւնք են մեր եկեղեցու անկարգութեան: Եթէ մենք ունենայինք օրինաւոր հոգեւորականութիւն, ի հարկէ, նրանք չէին լինի: Մեր ճանապարհորդութեան ժամանակ այնքան բազմաթիւ վանքեր տեսանք, այնքան բազմաթիւ վարդապետներ տեսանք: Ի՞նչ են շինում այդ տխմարները, ինչո՞վ են զբաղոած: Դու քո աչքով տեսար, դու այդ լաւ գիտես: Յայտնի բան է, նրանց վանքերի շուրջը կը կազմոի մի այդպիսի փչացած հասարակութիւն, որ ոչ ճշմարիտ բողոքական է եւ ոչ աւանդապահ լուսաւորչական:

Նա լռեց եւ մի քանի րոպէից յետոյ դարձեալ շարունակեց.

— Ոչինչ այնպէս, մանաւանդ արեւելքում, չէ կտրատում մի ազգի միութեան կապերը եւ չէ թուլացնում նրա ուժերը, որպէս կրօնական հերձուածն ու երկպառակութիւնը: Եւ մեր երկրին տիրող կառավարութիւնը շատ լաւ է հասկացել այդ: Իր քրիստոնեայ ժողովուրդներին մշտական կռոի ու անհամաձայնութեան մէջ պահելու համար նա թոյլ է տալիս օտարազգի միսիոնարներին գործելու նրանց մէջ: Ֆրանսիան եզոիտներին, որպէս վնասակար տարր, արտաքսում է իր միջից, իսկ Թուրքիան այդ հրէշներին ասպնջականութիւն է տալիս իր երկրում: Բողոքական քարոզիչները մեծ